ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2011 թվական թիվ76- Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ <ԱՅՐՈՒՄԻ ԳԲԱ>,<ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ԳԲԱ>,<ՁՈՐԱԿԱՆԻ ԳԲԱ> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թ. մայիսի 19-ի 'Հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների /վերստուգողների / ձևավորման և գործունեությունը կանոնակարգելու մասին ' N 1187- Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թ. մայիսի 3-ի 'Հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների անդամների / վերստուգողների / ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման , մրցույթի անցկացման կարգն ու մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները / չափանիշները / հաստատելու մասին' N 478 – ն հրամանը

որոշում եմ՝

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության պետական մասնակցությամբ <ԱՅՐՈՒՄԻ ԳԲԱ>,<ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ԳԲԱ>,<ՁՈՐԱԿԱՆԻ ԳԲԱ> փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի ընտրության մրցույթային հանձնաժողով հետևյալ կազմով

1) Ֆ.Ափինյան --- Հանձնաժողովի նախագահ , ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
2) Կ.Դովլաթբեկյան --- ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոց. ապահովության վարչության պետ
3) Ա.Գևորգյան --- Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
4) Ռ.Ներսեսյան --- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆին. և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
5) Հ.Ավալյան --- Աշխատակազմի քարտուղարության պետ
6) Վ.Խառատյան --- Հանձնաժողովի քարտուղար, աշխատակազմի առողջ. և սոց. ապահովության վարչության առաջատար մասնագետ
7) Ռ.Տիգրանյան --- ՀՀ ԱՆ աշխատակազմի ՊԱԳ-ի Տավուշի մարզային կենտրոնի պետ

2. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության պետական մասնակցությամբ <ԱՅՐՈՒՄԻ ԳԲԱ>,<ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ԳԲԱ>,<ՁՈՐԱԿԱՆԻ ԳԲԱ> փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի ընտրության մրցույթը անցկացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թ. մայիսի 3-ի N 478 – Ն հրամանով հաստատված կարգին համապատասխան:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

20 հունիսի 2011թ.
ք. Իջևան